ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2019թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի (ԽՆ-132-08.05.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-

ԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-132-08.05.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ:

Օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում (այսուհետ՝ օրենք), մասնավորապես, 12-րդ հոդվածում (Մշտական հանձնաժողովի լիազորությունները) լրացնել նոր՝ 4.1-ին մասով, որի համաձայն՝ մշտական հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր տարի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկումներից 40 օր առաջ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և համապատասխան մշտական հանձնաժողովի կազմավորումից հետո երկամսյա ժամկետում ներկայացնում է իր գործողությունների ռազմավարական ծրագիրը և դրան համապատասխան՝ գործողությունների տարեկան ծրագիրը, որոնք հաստատվում են մշտական հանձնաժողովի որոշմամբ:

Միաժամանակ, նախագծով սահմանվում են մշտական հանձնաժողովի գործողությունների տարեկան ծրագրին ներկայացվող պարտադիր պահանջները, մասնավորապես, մշտական հանձնաժողովի գործողությունների ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանն ուղղված անհրաժեշտ գործողությունների տարեկան պլանը, գործողություններն իրականացնող մշտական հանձնաժողովի պատասխանատու անդամները, գործողություններն իրականացնելու վերջնաժամկետները, անհրաժեշտ ֆինանսական,

մարդկային, տեխնիկական և (կամ) մյուս ռեսուրսները, միջազգային համագործակցության պլանը, գործողությունների իրականացման արդյունավետության գնահատման չափանիշները և այլ դրույթներ:

Այս առումով հարկավոր է անդրադառնալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103-րդ հոդվածի պահանջներին, որոնց համաձայն՝ սահմանադրական օրենքի իրավակարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից:

Ելնելով շարադրվածից՝ գտնում ենք, որ մշտական հանձնաժողովի կողմից գործողությունների ռազմավարական ծրագիր և դրան համապատասխան՝ գործողությունների տարեկան ծրագիր ներկայացնելու պահանջը, ինչպես նաև գործողությունների տարեկան ծրագրին ներկայացվող պարտադիր պահանջների նախատեսումը չեն կարող լինել օրենքի կարգավորման առարկա, քանի որ օրենքը կարգավորում է առավել կարևոր, բնորոշ և կայուն հասարակական հարաբերություններ, հետևաբար, նախագծով առաջարկվող կարգավորումները կարող են սահմանվել միայն մշտական հանձնաժողովի աշխատակարգով:

Բացի դրանից, անդրադառնալով մշտական հանձնաժողովների ստեղծման մասին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման նախագծով մշտական հանձնաժողովի գործողությունների ռազմավարական ծրագիրը սահմանելու վերաբերյալ կարգավորմանը, գտնում ենք, որ այն իրատեսական չի կարող համարվել, քանի որ ծրագրեր ներկայացնելը ենթադրում է արդեն իսկ ստեղծված մշտական հանձնաժողովի անդամների կողմից՝ քննարկումների արդյունքում մշակված և ներկայացված որոշակի գործողությունների ծրագիր, հետևաբար, քանի դեռ մշտական հանձնաժողովը չի ստեղծվել, այն չի կարող ներկայացնել իր գործողությունների ռազմավարական ծրագիրը:

Հաշվի առնելով շարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածները թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2019 թվականի N 754 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արտակ Ասատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծը (ԽՄ-132-08.05.2019-ՊԻ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հունիսի 13
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 12-րդ հոդվածը լրացնել նոր 4[1]-ին մասով՝

«4[1]. Մշտական հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր տարի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկումներից 40 օր առաջ, ինչպես նաև Ազգային ժողովի և համապատասխան մշտական հանձնաժողովի կազմավորումից հետո երկամսյա ժամկետում ներկայացնում է իր գործողությունների ռազմավարական ծրագիրը և դրան համապատասխան՝ գործողությունների տարեկան ծրագիրը, որոնք հաստատվում են հանձնաժողովի որոշմամբ: Հանձնաժողովի գործողությունների ռազմավարական ծրագրի և գործողությունների տարեկան ծրագրի վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու իրավունք ունեն հանձնաժողովի անդամները: Մշտական հանձնաժողովի գործողությունների տարեկան ծրագիրը կարող է փոփոխությունների ենթարկվել ըստ անհրաժեշտության՝ հանձնաժողովի անդամների առաջարկությամբ: Փոփոխություններն ընդունվում են նույն կարգով, ինչ կարգով ընդունվում է ծրագիրը:

Մշտական հանձնաժողովի գործողությունների տարեկան ծրագիրը պետք է պարտադիր պարունակի հետևյալ մասերը և ենթամասերը՝

1) հանձնաժողովի գործողությունների ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանն ուղղված անհրաժեշտ գործողությունների տարեկան պլանը,
2) գործողություններն իրականանցող հանձնաժողովի պատասխանատու անդամները,
3) գործողություններն իրականացնելու վերջնաժամկետները,
4) գործողություններն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական, մարդկային, տեխնիկական և/կամ այլ ռեսուրսները,

5) միջազգային համագործակցության պլանը,
6) գործողությունների իրականացման արդյունավետության գնահատման չափանիշները,
7) անհրաժեշտության դեպքում՝ այլ դրույթներ:

Մշտական հանձնաժողովի գործողությունների ռազմավարական ծրագիրը և գործողությունների տարեկան ծրագիրը հրապարակվում են Ազգային ժողովի պաշտոնական կայքի համապատասխան հանձնաժողովի էջում:»:

Հոդված 2.

- Օրենքի 112-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «վերահսկողություն» բառը փոխարինել «վերահսկողության» բառով:
- Նույն մասի 6-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով:
- Նույն մասը լրացնել նոր 7-րդ կետով՝
  «7) հանձնաժողովի գործողությունների ռազմավարական ծրագիրը:»:

Հոդված 3.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության յոթերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներն ընդունում են իրենց գործողությունների ռազմավարական ծրագրերը և 2019 թվականի գործողությունների տարեկան ծրագիրը սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Սույն նախագծի ընդունումը պայմանավորված է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների աշխատանքն առավել արդյունավետ և հաշվետվողական դարձնելու, ինչպես նաև հանձնաժողովների դերի բարձրացման անհրաժեշտությամբ:

Խորհրդարանական կառավարման անցնելուց հետո որևէ գործուն քայլ չի կատարվել խորհրդարանի դերի բարձրացման ուղղությամբ: Մեր համոզմամբ՝ այդ նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է սկսել խորհրդարանի կառուցվածքային հիմնական միավորներից՝ մշտական հանձնաժողովներից:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահամանդրական օրենքի 12-րդ հոդվածում բացահայտվում է մշտական հանձնաժողովի գործիքակազմը, սակայն գործունեության նպատակների վերաբերյալ օրենքում որևէ նշում չի պարունակվում:

Մեր կողմից առաջարկվում է յուրաքանչյուր հանձնաժողովի մասով իր գործունեության նպատակների սահմանումը թողնել Ազգային ժողովի առաջին նստաշրջանում մշտական հանձնաժողովների ստեղծման մասին Ազգային ժողովի որոշման նախագծով սահմանելուն, իսկ դրան համապատասխան՝ տարեկան գործողությունների ծրագրի սահմանումը՝ համապատասխան հանձնաժողովի որոշմանը՝ օրենքում տալով այդ ծրագրի հիմնական բնութագրիչները:

Գործողությունների քննարկվող ծրագիրը կարևոր է՝

- կոնկրետ նպատակներ սահմանելու,
- ըստ դրա՝ տարեկան հստակ ծրագիր ունենալու,
- հանձնաժողովում աշխատանքի արդարացի և հստակ բաժանում ունենալու,
- պետական բյուջեից հիմնավորված և կանխատեսելի միջոցներ ստանալու համար:

Նման պրակտիկա կիրառվում է բազմաթիվ երկրներում, որոնց թվում են Դանիան, Միացյալ Նահանգները, Ավստրալիան, Վրաստանը և այլք: